«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» սեպտեմբերի 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

Ն ԳԲԽ 33/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 12.09.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզվել է հետևյալը.

1. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 12.09.2014թ. ներկայացված բողոքում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն նշել է. «Ա) ընթացակարգի 13-րդ չափաբաժնով

պահանջվող համակարգիչների համար սահմանված տեխնիկական բնութագրերը ներկայացված են մասամբ ոչ հայերեն, կատարված են հղումներ և բացակայում է «կամ համարժեքը» պահանջը, բ) ընթացակարգի 14-րդ չափաբաժնով պահանջվող համակարգչի մոնիտորների համար նախատեսված բյուջեի խիստ անհամապատասխանությունը պահանջվող տեխնիկական բնութագրերով մոնիտորների գործող շուկայական գների հետ, գ) ընթացակարգի 13-րդ չափաբաժնի համար հանձնաժողովի կայացրած որոշումը՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ՝ անտեսելով հանձնաժողովի կողմից սահմանված անգործության ժամկետում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովին ուղղված դիմումը առաջարկված և պահանջվող տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունների վերաբերյալ»:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն վերոնշյալ բողոքով հայտնել է, որ 13-րդ չափաբաժնով նախատեսված սեղանի համակարգիչների գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Պրոցեսորի տեսակը i5 և ավելին, CPU-must have minimum score of 287 under BAPCoSYSmark 2007 Preview Rating benchmark, CPU shall be worked at designated CPU frequency by the CPU vendor, minimum number of cores-4, threads-8, Օպերացիոն համակարգը /Operating system/-լիցենզավորված ՄՍ Վինդոուս 7 64 բիտ անգլերեն /Preinstalled licensed MS Windows 7 professional 64 bit English/, Օպերացիոն հիշողությունը /RAM/-4 Գբ ԴԴՌ 3 1600 Մhg հաճախականությամբ /4GB DDR3 1600MHz with half of remaining slots free, տեսաքարտը առանձին 1024 Մբ /Not onboard 1024 Mb Graphic controller/, Multimedia-audio card, IO Ports-Rear min. 4x USB 2.0, 1 line in, 1 line out, 1 microphone in, Front 2 x USB 2.0, HDD-500GB 7200 rpm SATA III or equivalent, Optical drive (DVD+/-RW), Write to CD/DVD, Four serial ATA 3.0 Gb/s ports, PCI Express x 16 connector, PCI Conventional bus connector, VGA ports-1xVGA and 1xDVI, Gigabit (10/100/1000 Mbits/sec) LAN, USB keyboard, USB mouse, microtower case, ~220V, 50 Hz»:

Ներկայացված բողոքում ընկերությունը նշել է, որ այդ պահանջների մեջ կան 2 հղումներ BABCoSYSmark 2007 և MS Windows 7 ապրանքանիշերի վրա և բացակայում է «կամ համարժեքը» բառերը, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին, իսկ տեխնիկական բնութագրում նշված՝ CPU-must have minimum score of 287 under BAPCoSYSmark 2007 Preview Rating

benchmark, CPU shall be worked at designated CPU frequency by the CPU vendor, minimum number of cores-4, threads-8, պահանջի վերաբերյալ բացակայում է այդ պահանջի հայերեն թարգմանությունը, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջին:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ այդ պահանջը հակասում է վերոնշյալ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետին, պատճառաբանելով, որ. «Համակարգիչների տեխնիկական բնութագրերի նկարագրության համար կան հստակ և համընդհանուր տարածում գտած չափորոշիչներ, իսկ այդպիսի ձևակերպումով պահանջը քիչ է հայտնի, չի օգտագործվում ոչ մի համակարգիչ արտադրող ֆիրմայի կողմից, սահմանափակում է ընթացակարգի հնարավոր մասնակիցների ցուցակը: Բողոքաբերի ունեցած տեղեկության համաձայն՝ այս պահանջը հայկական շուկա է մտցվել համաշխարհային բանկի կողմից և լայնորեն կիրառվում է նրանց կողմից հայտարարված մրցույթներում և ենթադրվում է, որ նպատակ ունի սահմանափակելու այդ մրցույթում հնարավոր մասնակիցների ցուցակը: Նման պահանջը ստուգելու համար մասնակիցն առնվազն պետք է ունենա բավական թանկ արժողությամբ նշված ծրագրային համակարգը և պետք է կատարի բազմաթիվ փորձարկումներ, մինչև ստանա պահանջվող արդյունքը: Իրականում այն չի նպաստում ձեռք բերվող ապրանքի որակի բարձրացմանը, այլ ուղղակի արձանագրում է այն փաստը, որ տվյալ համակարգիչն ունի նման ռեյտինգ: Որակյալ համակարգիչ ձեռք բերելու Պատվիրատուի նպատակը այս պահանջով չի կարող իրականանալ: Որակյալ համակարգիչ ձեռք բերելու համար ավելի ճիշտ է ներկայացնել լուրջ պահանջներ համակարգչի սնուցման սարքի, մայրական սալիկ, հիշողության մոդուլների և այլ բաղադրամասերի նկատմամբ (ընդ որում հատուկ հղում անելով ցանկալի արտադրողների վրա), քան տվյալ դեպքում վերը նշված պահանջն է: Բողոքաբեր ընկերությունը համոզված է, որ նաև այս պահանջի պատճառով է, որ ներկայացված առաջարկների մեծ մասը գնահատվել է պահանջներին չբավարարող»:

Բողոքաբերը հայտնել է նաև, որ Ընթացակարգի մասնակիցներից ոչ մեկի գնային առաջարկը չի ընդունվել հանձնաժողովի կողմից առաջարկված գները նախատեսված բյուջեից բարձր լինելու հետևանքով: Հնարավոր պատճառներից մեկն այն է, որ Պատվիրատուի կողմից մինչև ընթացակարգի հայտարարելը չի կատարվել շուկայական գների պատշաճ ուսումնասիրություն, որը հակասում է ՀՀ կառավարության

10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.09.2014թ. որոշման վերաբերյալ հայտարարության համաձայն 13-րդ չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն: Նույն հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակելուց հետո 5-րդ օրացուցային օրը, իսկ պայմանագիր կնքելու ժամկետ է սահմանվել անգործության ժամկետն ավարտվելուց հետո 7-րդ օրացուցային օրը:

Անգործության ժամկետում 05.09.2014թ. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել դիմում 13-րդ չափաբաժնի մասով իրենց ներկայացրած գնային առաջարկը պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ: Ինչպես նշված է դիմումում, հայտերի ներկայացման փուլում ընկերությունը չի ունեցել հնարավորություն ստուգելու իրենց կողմից առաջարկված կառուցվածքով համակարգչի փաստացի ռեյտինգը SysMark 2007 համակարգի միջոցով, և հիմք ընդունելով տվյալ ծրագրային համակարգի արտադրողի ինտերնետ կայքում տեղակայված ինֆորմացիան, ներկայացրել է գնային առաջարկը: Ենթադրելով, որ առաջարկած համակարգիչը փաստացի կարող է չհամապատասխանել Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջին՝ ընկերության գնային առաջարկի տեխնիկական բնութագրերի նկարագրության մեջ բացակայում է այդ պահանջին բավարարելու վերաբերյալ որևէ նշում: Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հայտարարությունն ստանալուց հետո «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն կոլեգաներից ժամանակավոր օգտագործման համար խնդրել է SysMark 2007 ծրագիրը և իրենց առաջարկի ռեյտինգը ստուգելուց հետո՝ 05.02.2014թ. ներկայացրել է դիմում գնահատող հանձնաժողովին ընկերության առաջարկի և ներկայացված պահանջի անհամապատասխանության վերաբերյալ: Ընկերության դիմումը գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է, անգործության ժամկետում ընկերության դիմումին չի տրվել պատասխան և անգործության ժամկետի ավարտից հետո ընկերությանն առաջարկվել է կնքել պայմանագիր 13-րդ չափաբաժնով նախատեսված համակարգիչների մատակարարման վերաբերյալ:

Այնուհետև, ընկերությունը հանձնաժողովին հարց է ուղղել, թե արդյոք պետք է հասկանալ, որ իրենք մատակարարելու են ընկերության առաջարկած կառուցվածքով համակարգիչները, որոնք չեն բավարարում տեխնիկական բնութագրով սահմանված

պահանջներին, ինչի կապակցությամբ հանձնաժողովից ստացվել է պատասխան, որ անհամապատասխանության դեպքում կկիրառվի ընթացակարգի պայմանագրի նախագծով նախատեսված դրույթները: Նշվածից ընկերությունը եզրակացրել է, որ չնայած այն բանին, որ ընկերության առաջարկած համակարգիչները չեն բավարարում Պատվիրատուի պահանջներին, բայց գնահատող հանձնաժողովը համարում է, որ դրանք բավարարում են իրենց պահանջներին, սակայն չեն համարում, որ ընկերությունը կարող է մատակարարել իրենց պահանջներին չհամապատասխանող համակարգիչներ:

Բողոքաբեր ընկերությունը խնդրել է «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով ընթացակարգը 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով համարել «Գնումների մասին» ՀՀ օրենքին անհամապատասխան և դրանց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները համարել անվավեր:

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՎԾ) 24.09.2014թ. N 28-36-1362 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով www.armeps.am կայքի միջոցով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակում հայտարարել է «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով գնման ընթացակարգ:

13.08.2014թ. հրավերը ուղարկվել է գրանցված բոլոր մասնակիցներին: Հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերը՝ Պատվիրատուն մասնակիցներից պահանջել է ներկայացնել հրավերի հավելված N 5-ը և 5.1-ը: Մի շարք կազմակերպությունների հետ համատեղ ընթացակարգին մասնակցել է նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, որը գնային առաջարկները ներկայացրել է 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների համար: Ընթացակարգի մասնակից կազմակերպությունները իրենց կողմից ներկայացված գնային առաջարկներում ներկայացրել են նաև տեխնիկական բնութագրեր: Այդպիսի պահանջ Պատվիրատուի կողմից չի սահմանվել, սակայն գնահատող հանձնաժողովը նպատակահարմար է գտել քննարկել առաջարկված

տեխնիկական բնութագրերը պահանջված ապրանքների տեխնիկական բնութագրերի հետ համարժեքությունը գնահատելու նպատակով:

02.09.2014թ. գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ 13-րդ չափաբաժնի մասով հաղթող է ճանաչվել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, քանի որ առաջարկված բնութագրի բոլոր պարամետրերը համապատասխանել են ՀՀ ԱՎԾ տեխնիկական բնութագրին, իսկ ռեյտինգի ստուգման համար ՀՀ ԱՎԾ-ն հիմք է ընդունել SYSMARK 2007-ի արտադրողի կողմից պաշտոնական կայքում հրապարակած տեղեկատվությունը, քանի որ ՀՀ ԱՎԾ-ի կողմից փաստացի ստուգում կարող է կատարվել միայն համակարգիչների մատակարարումից հետո:

Ինչ վերաբերում է պահանջի մեջ կատարած հղումներին՝ BABCoSYSMARK 2007 և MS Windows 7 ապրանքանիշերի վրա, ապա հայտնել է, որ դրանք վերաբերում են ոչ թե ձեռքբերվող համակարգչին, այլ ծրագրերին:

05.09.2014թ. Պատվիրատուն «Կոմպմարկետ» ՍՊԸ-ից ստացել է էլեկտրոնային նամակ (հայտերի բացումը կատարվել է 25.08.2014թ.), որով կազմակերպությունը խնդրել է իր կողմից ներկայացված բնութագիրը համարել ՀՀ ԱՎԾ-ի կողմից սահմանված բնութագրին չհամապատասխանող, քանի որ փաստացի թեստավորման արդյունքում պարզվել է, առաջարկված համակարգչի փաստացի ռեյտինգը ավելի ցածր է ստացվում, քան ՀՀ ԱՎԾ-ի կողմից տեխնիկական բնութագրով պահանջված ռեյտինգն է: Նշված նամակը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ ներկայացված հայտերը արդեն բացված են եղել և որոշված են եղել հաղթող կազմակերպությունները, իսկ հրավերի պարզաբանման նպատակով հարցում օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում ՀՀ ԱՎԾ-ն չի ստացել:

Անգործության ժամկետի ավարտից հետո ՀՀ ԱՎԾ-ն 09.09.2014թ. պայմանագրի շնորհում է կատարել հաղթող կազմակերպություններին, այդ թվում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին:

10.09.2014թ. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ից ՀՀ ԱՎԾ-ն էլեկտրոնային եղանակով ստացել է 2-րդ նամակը, որով կազմակերպությունը խնդրել է ներկայացնել պահանջվող ռեյտինգը չապահովող ապրանք մատակարարելու դեպքում կիրառվող ընթացակարգը: Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԱՎԾ-ն ընկերությանը տեղեկացրել է, որ իրենց ուղարկած պայմանագրի նախագծում սահմանված է կողմերի իրավունքները և պարտականությունները:

13.09.2014թ. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի շնորհումը մերժվել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում բողոքի ներկայացման հիմքով:

Վերոգրյալը հաշվի առնելով, Պատվիրատուն առարկել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի կապակցությամբ և միաժամանակ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին տեղեկացրել է, որ դադարեցրել է պայմանագրերի կնքումը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

ՀՀ ԱՎԾ-ն 24.09.2014թ. N 28-36-1362 գրությունում նշել է նաև, որ 14-րդ չափաբաժնի մասով մրցույթը համարվել է չկայացած, քանի որ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել տեսավահանակի՝ ՀՀ կառավարության 18.04.2013թ. N 441-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական բնութագրին, իսկ ինչ վերաբերում է տեսավահանակի համար սահմանված ցածր միավորի արժեքին, Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 13.07.2013թ. թիվ 573-Ա հրամանով նշված ապրանքատեսակի համար առավելագույն գին սահմանված է 46000 ՀՀ դրամ, որն էլ հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ-ն կատարել է պլանավորումը:

3. ԳԲԽ-33/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-33/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) 12.09.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից 24.09.2014թ. ներկայացված N 28-36-1362 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում

կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որի 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, հայտ է ներկայացրել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, ինչի արդյունքում Ընկերությունն Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտով՝ գնային առաջարկով, 13-րդ չափաբաժնի մասով՝ «սեղանի համակարգիչներ», գնման առարկայի համար սահմանել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ մայրական սալիկ Asus B75M-A (MATX), պրոցեսոր Intel Core i7-3770, օպերատիվ հիշողություն 4GB (1x4GB), Կոշտ սկավառակ 500GB Toshiba SATA DT01ACA050, լազերային սկավառակակիր DVD-RW Samsung, տեսաքարտ առանձին Sapphire HD5450 1GB, ստեղնաշար USB, մկնիկ USB, Իրան Spire OEM1071B-420W-E, Microtower, օպերացիոն համակարգը /Operating System/-լիցենզավորված ՄՍ Վինդոուս 7 64 բիտ անգլերեն /Preinstalled licensed MS Windows 7 professional 64 bit English:

Ընկերությունը ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկով սահմանված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող՝ հավելված N 1 տեխնիկական բնութագրի պահանջներին, որի 13-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկան եղել է՝ սեղանի համակարգիչներ, պրոցեսորի տեսակը i5 և ավելին, CPU-must have minimum score of 287 under BAPCoSYSmark 2007 Preview Rating benchmark, CPU shall be worked at designated CPU frequency by the CPU vendor, minimum number of cores-4, threads-8, Օպերացիոն համակարգը /Operating system/-լիցենզավորված ՄՍ Վինդոուս 7 64 բիտ անգլերեն /Preinstalled licensed MS Windows 7 professional 64 bit English/, Օպերացիոն հիշողությունը /RAM/-4 Գբ ԴԴՌ 3 1600 Մhg հաճախականությամբ /4GB DDR3 1600MHz with half of remaining slots free, տեսաքարտը առանձին 1024 Մբ /Not onboard 1024 Mb Graphic controller/, Multimedia-audio card, IO Ports-Rear min. 4x USB 2.0, 1 line in, 1 line out, 1 microphone in, Front 2 x USB 2.0, HDD-500GB 7200 rpm SATA III or equivalent, Optical drive (DVD+/-RW), Write to CD/DVD, Four serial ATA 3.0 Gb/s ports, PCI Express x 16 connector, PCI Conventional bus connector, VGA ports-1xVGA and 1xDVI, Gigabit (10/100/1000 Mbits/sec) LAN, USB keyboard, USB mouse, microtower case, ~220V, 50 Hz:

Ընկերությունը նշել է նաև, որ Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրում բացակայում է CPU shall be worked at designated CPU frequency by the CPU vendor, minimum number of cores-4, threads-8 պահանջի հայերեն թարգմանությունը:

Կենտրոնում՝ 19.09.2014թ., ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, ինչպես նաև հայտնեց, որ ռեյտինգի ստուգման համար Պատվիրատուն հիմք է ընդունել SYSMARK 2007-ի արտադրողի կողմից պաշտոնական կայքում հրապարակած տեղեկատվությունը, որի ստուգումը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից փաստացի կարող է կատարվել միայն համակարգիչների մատակարարումից հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և նույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ բաց ընթացակարգի գնումների հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:

Մինչդեռ՝ Պատվիրատուն «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող՝ հավելված N 1 տեխնիկական բնութագրում սահմանելով՝ «CPU-must have minimum score of 287 under BAPCoSYSmark 2007 Preview Rating benchmark, CPU shall be worked at designated CPU frequency by the CPU vendor, minimum number of cores-4, threads-8» պահանջը անգլերեն լեզվով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն գնմանը վերաբերող փաստաթղթերը, այդ թվում տեխնիկական բնութագրերը, պետք է կազմվեն և հրապարակվեն հայերեն լեզվով: Հետևաբար՝ գտնում ենք, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը խախտելու հիմքով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Նկատի ունենալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը խախտելու հիմքով բողոքաբերի ներկայացրած պահանջը հիմնավոր է, ուստի նման պայմաններում Կենտրոնն այլևս չի անդրադառնում

Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի որոշումն օրենքի մյուս պահանջներին հակասելու բողոքաբերի բողոքում նշված փաստարկներին:

Ինչ վերաբերում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջին, ապա այդ մասով ներկայացված բողոքն առարկայազուրկ է, քանի որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընթացակարգն այդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ ներկայացված հայտերը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից, և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ առաջարկում ենք «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի 12.09.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/8-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը՝ Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով:

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-33/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Մկրտչյան